ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/204

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 20.07.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12503-2021 գրությամբ «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.2021թ. թիվ 0688 գրության հիման վրա, 05.08.2021թ. թիվ 26/26-1/12503-2021 գրությամբ նախաձեռնել է «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««*Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.*

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հրապարակել է թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18» գնանշման հարցումը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ԼԱՅԹ ԸՆԴ ՄՈՐ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից) և ճանաչվել ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի շրջանակում:

Պատվիրատուն 14.07.2021 թվականին Մասնակցին էր ուղարկել գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կնքված պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումները:

Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությունը Պատվիրատուին է ուղարկել սահմանված ժամկետում՝ 28.07.2021 թվականին՝ փոստային առաքմամբ:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.07.2021 թվականի թիվ 5 արձանագրությամբ անօրինական եղանակով զրկեց մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գործի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած

պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Պայմանավորված նշվածով պետք է փաստել, որ սույն գործով պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե՞ արդյոք մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, թե՞ ոչ:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից զրկել է հիմք ընդունելով այն հանգամանքը, թե՞ իբր Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոհիշալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի

գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Ուստի պարտատիրոջ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը:

Սույն դեպքում Պատվիրատուի 14.07.2021 թվականի պահանջի իրավունքին ի պատասխան մասնակցի կողմից սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը և տուժանքի մասին համաձայնությունը, այսինքն ստանձնած պարտավորությունը մասնակցի կողմից կատարվել է պատշաճ սահմանված ժակետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

(...):

2. Կապի կազմակերպությանը մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը տրված գրավոր դիմումները և ծանուցումները համարվում են ժամկետին տրված:

Սույն իրավական նորմերի և գործի փաստերի համադրության արդյունքում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին ուղղված՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքված պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությունը ներկայացնելու Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի վերջնաժամկետն էր 28.07.2021 թվականը և այդ օրը կապի կազմակերպության միջոցով ուղարկված փաստաթղթերը համարվում են ուղարկված սահմանված ժամկետում, քանզի հաշվի առնելով կողմերի հասցեների հեռավորությունը փոստային առաքմամբ ուղարկված փաստաթղթերը լավագույն դեպքում կարող էին Պատվիրատուին հասնել 30.07.2021 թվականին և ինչ կերպ է

Պատվիրատուն 29.07.2021 թվականին չսպասելով հավանական փոստային առաքմամբ կնքված պայմանագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությունը ուղարկելուն գնահատել Մասնակցի վարքագիծը՝ պայմանագի կնքելուց հրաժարվելու վերաբերյալ և որոշել պայմանագրի կնքման իրավունքը փոխանցել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալով պայմանավորված պետք է փաստել, որ Մասնակիցը հրավերով ստանձնած պարտավորությունները կատարել է սահմանված ժամկետներում և Պատվիրատուն ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից: Իսկ ստանձնած պարտավորության խախտման բացակայությունը բացառում է Մասնակցին գնումների գործընթացում ներառելու հիմքերը:

Պահանջը.

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ԼԱՅԹ ԸՆԴ ՄՈՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/204 ընթացակարգի շրջանակներում 10.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոնշված դիքորոշումը:

3. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2021թ. թիվ 0688 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով և ճանաչվել հաղթող մասնակից 2-րդ չափաբաժնի մասով:

«Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին 14.07.2021թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը, սակայն 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը իր կողմից կնքված

և ստորագրված պայմանագրի օրինակը չի ներկայացրել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ:

Կից ներկայացվում է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առկա փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/204 ընթացակարգի շրջանակներում 10.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.07.2021թ. էլեկտրոնային եղանակով «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը:

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 14.07.2021թ. պայմանագրի նախագիծը ուղարկվել է Ընկերությանը, սակայն կնքված պայմանագիրը վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել Պատվիրատուին:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12503-

2021 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.2021թ. թիվ 0688 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա *ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի* ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է « ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.07.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 14.07.2021թ. պայմանագրի նախագիծը ուղարկվել է Ընկերությանը, սակայն կնքված պայմանագիրը վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել Պատվիրատուին:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/204 ընթացակարգի քննության շրջանակներում հայտնել է, որ 28.07.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ի հավաստումն նշվածի Ընկերության կողմից ներկայացվել է փոստային **անդորրագրի բնօրինակը, համաձայն որի N 1875 առաքանին (կոդ RR301333590AM,** ***ուղարկող «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ, ստացող՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ) «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ է հանձնվել 28.07.2021թ.:***

Վերը նշված փաստական հանգամանքով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմել է Պատվիրատուին և խնդրել է հայտնել, արդյո՞ք «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ստացել է «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը, թե՞ ոչ:

Ի պատասխան՝ Պատվիրատուն տրամադրել է «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով ուղեկցող գրությամբ ուղղարկված Ընկերության կողմից ստորագրված N «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/18-2» ծածկագրով պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 14.07.2021թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 15.07.2021թ. և լրացել 28.07.2021թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «Հայփոստ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի ընթացքում, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 05.08.2021թ. թիվ 26/26-1/12503-2021 գրությամբ «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**